Պարույր Սևակ

Նահանջ երգով

3

XXI

Բոլոր փողոցներում՝
քամիների ժողով,
Իսկ խաչմերուկներում՝
խորհրդակցություն բքի.
-Ի՞նչ են քննում արդյոք,
Ի՞նչ կորոշեն:
Իսկ ես...
արդեն խորհել
ու մտածել եմ ես,
Ինչ որ ծածուկ էր դեռ՝
Արդեն բացել եմ ես,
Եվ մեկընդմիշտ՝ ցավով՝ արդ հասկացել եմ ես,
Որ դու գիշերային իմ սարսափն ես անանց.
-Թույլ տուր մի քիչ քնե՛մ...
Եվ այն ափն ես հեռու,
Որ ընկած է անծիր օվկիանոսից անդին.
-Եթե այստեղ՝ գիշեր,

Այնտեղ ցերեկ է վառ...
Այս առաձիգ կյանքի ցատկան լարի վրա
Թե ես՝ լարախաղաց,
Դու այն ձողն ես փրկիչ,
Առանց որի վաղուց փշրել էի գանգրս...
Դու՝
վրիպա՜կ իմ սեր,
Եվ այնպիսի՛,
Որին շտկում չկա,
Ու դրանից
Աղճատվում է կյանքի իմա՜ստը ողջ...
Եվ ինձ ի՞նչ է մնում, որ ի՞նչ անեմ:
Թե իմ տառապանքից ես արձաններ շինեմ՝
Դու կարող ես իսկույն մի կռատուն դառնալ,
Ուր կարող է անթիվ տոտեմների
Մի ո՜ղջ կենդանական աշխարհ լինել.
Բացի շնի՛ց գուցե,
Որ տոտեմն էր կարծեմ հավատարիմ սիրո...
Սակայն կուռք են կերտում լոկ հավատի՛ց դրդված
Եվ հավատի՜ համար,
Ինչ ես չունեմ հիմա,
Ու թե տառապում եմ՝
Ա՛յդ պատճառով...
Ու ես տառապանքից խաղալիք եմ շինում,
Որ... ինձ նման տարեց մանուկներին խաբեմ...

XXII

Եվ իջնում է ահա մի գոգավոր գիշեր,
Ասես հսկայական մի կափարիչ մրոտ:

Եվ զգում եմ հիմա իմ սեփական կաշվին,
Որ - հակառակ խելոք օրացույցի պնդման -
Գիշերներն են աճում ցերեկների հաշվին...
Դրսում վրնջում է սանձակոտոր քամին՝
Իր զամբիկից զրկված հովատակի նման:
Եվ իմ կուրծքն է իջնում ու բարձրանում շուտ-շուտ՝
Անխղճորեն քշված ձիու կողերի պես...
Մե՛կ էլ անակնկա՛լ,
ռադիո-ալիքներով,
Առանց դուռ բախելու՝
օգնության է գալիս
Բախը բարությամբ իր աստվածային:
Անշունչ երգեհոնը տառապյալ է դառնում.
Ընկնում-վերականգնում՝
ավաղանքի ծխով
Ճշմարտում է սերը զուգակշիռ ցավին
Եվ անձնադատ խոսքով պատժապարտում իրեն:
Ու ես վերանում եմ,
Այս աշխարհից պոկվում,
Ու ես կորցրնում եմ զգացումը կշռի:
Բայց... հիշում եմ հանկարծ,
Որ այսպես էր լինում,
Երբ գլուխըս հանգչում քո ծնկներին
Ու ճակատս էր շոյվում քո ափերով տաքուկ:
Վերացումի այդ կարճ-երկար վայրկյաններին
Ես հավատում էի մարդկայնորեն,
Որ կարո՛ղ են լինել և իսկապե՛ս որ կան
Ուրիշ մոլորակներ և աշխարհներ ուրիշ,
Որտեղ չկա կշիռ ու ծանրություն...
...Հիմա կշռում եմ ես երեք հազար չորս փութ,

Եվ չի կարողանում հողն ինձ կրել.
-Նրա կեղևի մեջ իմ ոտներն են խրվում՝
Սեր ու կորուստ չափող կարկինի պես...

XXIII

Բքի հարվածներից ծառերն ահա
Խեղճ-խեղճ կկոցում են աչքերն իրենց:
Ե՞ս եմ արդյոք լալիս,
Թե այդ՝ ձյունն է հալչում
Տառապանքից ջերմած դեմքիս վրա...
Իմ տղամարդ տեղով լաց եմ ուզում լինել:
Ի՞նչ կա ամաչելու.
Հապա ինչպե՞ս,
Բա ո՞նց...
Չէ՞ որ հիմա ես մի թանկ մեռել եմ թաղում,
Այն էլ՝ ո՛ղջ ու առո՛ղջ,
Ապրո՛ղ ու կենդանի՛...
Գիտե՞ս, թե ինչպե՞ս են մեռելատեր մարդուն
Մխիթարում մերոնք՝
Լեռնաշխարհի մարդիկ.
«Աստված ձեռիցդ առավ,
Թող սրտի՛ցդ էլ առնի»:
Քեզ իմ ձեռքից առա՛ն.
Մեռելատեր եմ ես:
Իսկ ե՞րբ պիտի գնաս և իմ սրտի՛ց, սրտի՛ց...
Իսկ թե ի՛նչ է լինում իմ սրտի՛ հետ, գիտե՞ս:
Հարմար բառը գտնել այնքան հեշտ հիմա,
Ինչքան որ աստղծուն բակում հանդիպելը:
Եվ այստեղ է, ահա, որ չես կարող

Չնախանձել,
թե կան այլ լեզուներ,
Որ և՛ բաժանումը , և՛ պայթումը սրտի
Նո՛ւյն բառով եմ կոչում,
Նույն մե՛կ բառով...

XXIV

Եվ ուզում եմ ասել քեզ երկու խոսք:
Ու խցիկն եմ մտնում հեռախոսի:
Բայց հիշում եմ հանկարծ, որ ամիսներ առաջ,
Երբ ես խոսում էի հեռախոսով քեզ հետ՝
Սառած լսափողը շիկանում էր ձեռքիս
Քո կարոտի խոսքից ու շշուկից սիրո:
Ինչպես ոսկորի մեջ ծուծն է մնում՝
Լսափողի մեջ էլ մնում էր քո ձայնից
Ինչ-որ ալիք մի տաք,
Ու ես -
Գազանի պես -
Պատրաստ էի ջարդել,
Միայն թե դուրս հանեմ...
Հիմա, հավանաբար, լսափողով այդ նույն,
Ինչպես մութ անցուղով,
Պիտի մի ցուրտ սողա,
Մի միջանցիկ կեղծիք...
Ու ես
Անմիջապես
Ձեռքիս ետ եմ քաշում լսափողից՝
Ա՛յն գազանի նման, որ սխալմամբ
Թաթն է հանկարծ դնում ոգնու վրա:

XXV

Ասեղներ են հոսում ամեն ջրհորդանից:
Ասեղների հոսք է և իմ ներսում...
Մեծքթանի մի ամպ առաջ մեկնած դնչով
Հոտոտում է հեռվից մի երկնաքեր շինվածք,
Որ երևի նրան ուրույն կին է թվում՝
Սլացի՛կ ու ճերմա՛կ,
Հնարավո՛ր սիրով...
Ես իմ տառապանքից տոկունություն հյուսում
Եվ ձգտում եմ կախվել կանանց թարթիչներից.
-Գոնե չլինեի՛ն այսքան ներկված-սարքված...
Եվ կտրելով իսկույն՝
հրթիռի պես
Հայացքս եմ վեր նետում
Ու նկատում,
Որ մեկ ուրիշ սև ամպ, իտալիաձև՛
Իր կոշիկն է կախել ուղիղ գլխիս.
-Ո՛ւր էր թե հարվածեր՝
Խելքի գայի...
Ա՛խ, թե խելքի գայի
Ու չզգայի,
Որ քո մաշկով էին իմ մատները սնվում,
Մինչդեռ հիմա, երբ ես քեզ եմ դիպչում հանկարծ՝
Ընկրկում եմ իսկույն բնազդական վախով,
Ասես հանկարծ դիպա էլեկտրական լարի.
-Իմ մատները քեզնից օտար հոտ են առնում...
Եվ համբուրում էի ես այն տեղերը քո,
Որ տարիներ հետո խորշոմներ են տալիս.

-Այդ խորշոմներն արդեն ե՛ս չպիտի տեսնեմ...
Օր ու գիշերները հաշվված ժամերն իրենց
Ծախսում են միշտ՝ տնտես մի տանտիրոջ նման:
Սակայն կույրի վե՞ջն է, թե թանկ արժե մոմը:
Մենք՝ կուրացած սիրուց
Ու կուրացած բախտից,
Ցերեկ էինք վառում գիշերվա մեջ
Եվ գիշերվա հաշվին ձգում ցերեկները...
-Ո՞վ կարող է ասել, թե այդ ե՞րբ է հասնում
Իր չհաշվված սիրո օրահավասարը...

XXVI

Սիրում էի ես քեզ «Իմ խնդություն» կոչել:
Եվ դա սիրուն բա՛ռ չէր,
Եվ կամ սո՛ւտ չէր սիրուն...
Հիմա...
Նույնիսկ լեզուն, կենդանու պես,
Իր բնազդը ունի:
Ու երբ բնազդաբար
Նորից կոչում եմ քեզ «Իմ խնդություն»,
Բերանիս մեջ լեզուս դաղդրղվում է այնպես,
Ինչպես, հավանաբար, այն ձագուկի լեզուն,
Որ եղինջ է կրծում՝ խոտ կարծելով...
Քեզ ի՞նչ կոչեմ հիմա.
«Իմ տառապա՞նք»,
«Իմ ցա՞վ»:
Ի՞նչ, ի՞նչ ասեմ հիմա...
Լավ է՝ ոչի՛նչ չասեմ
Եվ ինքնակամ թույլ տամ, որ իմ միտքը գործի

Շախմատային ծանոթ ձիուկի պես՝
Թռչկոտելով թեքվի ամեն կողմի վրա,
Որտեղ եղել ենք մենք ու չենք լինի...

XXVII

Շորորում է նորից հնատարազ մի օր:
Իսկ ես քո նոր շորերն էլ չպիտի՛ տեսնեմ...
Սակայն աչքերն ունեն հեռուստացույցն իրենց.
Ու կտեսնեմ ես քեզ նաև հեռվից-հեռու:
Քեզ կտեսնեմ հենց այն ծաղկանկար շորով,
Որի զանգակաձև քղանցքներից
Վարպետորդի քամին կարուսել էր սարքում,
Մի կարուսել, որ միշտ փչանում էր շուտ-շուտ,
Բայց և վերասարքվում արագորեն...
Եվ ձեռքերն էլ ունեն հիշողությունն իրենց...
Ու հիշում են իմոնք
Եվ կհիշեն անվերջ
Իրենց նվաղումը՝
Մազերիդ մեջ,
Ուշաթափումն իրենց՝
Կրծքիդ վրա,
Եվ արթնացումն իրենց՝
Տաք կողերիդ...
Եվ ոտքերն էլ ունեն բնազդն իրենց.
Ինձ այնտեղ են տանում, որ «մերն» էինք կոչում,
Ինձ տանում են այնտեղ՝
Կամքս չհարցնելով:

Ահա փողո՛ցը մեր.
Կուլ եմ տալիս աղմուկ:
Ահա նրբա՛նցքը մեր.
Ներծծում եմ խավար,
Եվ իմ կնճիռներում ցավն է կապտին տալիս...
Ահա ծառուղի՛ն մեր...
Եվ հյուսիսում այս պաղ
Գարնան վերահասից ծառերն են լաց լինում՝
Արևադարձային մե՛ծ-մե՛ծ կաթիլներով...
Ահա կանգա՛ռը մեր...
Ներշնչում եմ հառաչ,
Արտաշնչում մեռյալ մի լռություն,
Եվ լալիս է հոգիս՝
քարանձավի նման -
Ինչ-որ անմարդկայի՛ն արցունքներով...
Ահա մեր անտա՛ռը...
Եվ իմ ականջներում
Անվերջ զրընգում է արյունը տաք,
Այնպե՛ս խենթացընող և միալա՛ր այնպես,
Ինչպես մժղուկների պարսի բզզոցը խուլ՝
Ամռան անտառի մեջ,
Շոգ կեսօրին...
Ահա երկի՛նքը մեր գիշերայի՛ն...
Հոլանդական պանրի գլխի նման դեղնած
Մի լուսին է հիմա ինձ խեթ ու մեթ նայում՝
Գուցե ակնարկելով հացադուլը անկամ...
Սևամռութ մի ամպ, իմ աչքերի առաջ,
Ասես վերքիս վրա աղ ածելով,
Լուսնի ճաղն է կրծում՝
արծաթ հյութով նրան

Իր սև բեղ-մորուքը թունդ օծելով...
Ահա երկի՛րը մեր...
Եվ մեր Երկրի նման՝
Իմ կլորված սիրտն էլ իր բևեռներն ունի,
Քո «այո»-ն ու քո «չէ»-ն՝
Երկուսն էլ սա՛ռն ու պա՛ղ...

XXVIII

Է՞հ, հանդերձյալ կյանքի չի հավատում հիմա
Հռոմի պա՛պը նույնիսկ, էլ ուր մնաց թե ես:
Բայց իսկապես սերը իր հանդերձյալն ունի՝
Ուրիշ - անդրբսերյան - երկրորդ մի կյանք,
Որ կոչվում է կարծեմ հիշողություն,
Եվ չի գնում փութանց,
Ինչպես առաջինը,
Այլ տևում է այնքան,
Որքան ինքը կյանքը:
Այդ կյանքով է ապրում իմ սերն արդեն՝
Նորի՛ց նորոգելով,
Ապրեցնելո՛վ
Այն ամենը, որ կա՛ր և չի՛ լինի...
Ու խլացած արդեն տառապանքի ցավից՝
Քեզ եմ դարձյալ լսում,
Լսում քո խոսքերը,
Որ խառնվում էին սիրով հունցած կյանքիս,
Ինչպես աղմկարար այս քաղաքն է խառնում
Թռչունների ծիլ-վիլն իր ծխացող շնչին՝

Քաղցրը թթխմորի՛,
Անուշ մակարդի՛ պես...
Ինձ փողոց եմ նետում,
Գցում բուքի բերան,
Իսկ դու բուքի միջից իմ առաջ ես ելնում
Թեթև - ծաղկուն շորով գարնանային
Ու ճշմարտում սերըդ մի ժպիտով,
Որից ամեն կասկած խուսափում է այնպես,
Ինչպես խույս է տալիս դևը խաչից...
Այն, ինչ անվանում են վիրավորանք,
Անհնար է դառնում երկար պահել.
Մեկ էլ տեսար՝ հոտեց-գարշահոտեց մեջըդ:
Եվ այստեղ է ահա, որ մի հարբած արցունք,
Երկա՛ր ու տանջալի՛ց տատանվելուց հետո,
Տապալվում է ներքև՝
Հասկացնելով,
Թե կարոտը մարդ չէ, որ բռնես ու մորթես,
Եվ անզոր է այստեղ այն դահիճը նույնիսկ,
Որին անվանում են վիրավորանք...
Աչքերիս եմ սաստում՝ պինդ փակելով:
Սակայն կոպերիս տակ քո աչքերն են բացվում.
Ինձ հարազա՛տ այնքան սև աչքերըդ,
Որ երբ ինքնամոռաց նայում էին երկինք՝
Ճերմակ ամպերն էին նրանց խորքում լողում,
Հեռանալուց առաջ մի պահ կաշկանդվելով
Քո կեռ թարթիչների վանդակի մեջ թավուտ:
Ա՛խ, այդ աչքերը քո
Ու քո թարթիչները...

XXIX

Սերն ինձ համար կյանքում այն կնիքն է եղել,
Որ միշտ դրոշմում են ոսկու վրա:
Եթե կյանքս զուրկ է այդ կնիքից սիրո՝
Եվ սեփակա՛ն աչքիս կեղծ է թվում ոսկիս:
Հիմա... որտե՞ղ ծախսեմ
Եվ ո՞ւմ ծախեմ ոսկիս,
Ինչպե՞ս հավատացնեմ, թե կեղծվա՛ծ չէ, ինչպե՞ս,
Եթե ինքս արդեն չեմ հավատում դրան,
Եթե ինքս գիտեմ, որ նա պիտի
Այս քեզազուրկ օդից ժանգապատի...

XXX

Ու բռնում եմ հանկարծ ինձ հանցանքի վայրում...
Քո խակակութ սիրուց ատամնառու սրտով,
Ստուգապես խաբված և մահառիթ խոցված՝
Ես հպարտությանս բարձր թոշակ տալիս,
Որով բողոքարկու նրա շուրթն եմ փակում
Եվ... նորոգում սերս այն ներումով,
Որ մտովին է լոկ, ուրեմն՝ անցողակի...
Թանաքի պես թանձրը ցավս է տարրալուծվում՝
Տալով կապո՛ւյտ մի ջինջ
Եվ ջո՛ւր վճիտ...
Ինձ խաբելով ինքս՝
Ինձ չեմ հաշվում խաբված.
Ինքս ինձնից գաղտնի՝

Քեզ եմ դարձյալ սիրում...
Եվ այսքանից հետո՝
Այս ցավերի
Եվ այս տանջանքի մեջ քեզ սիրելը
Այնքա՛ն արտառոց է,
Տարօրինա՛կ այնքան,
Որքան արտառոց է, որ ծովերի
Աղի ջրերի մեջ ողջ ժամանակ ապրող
Ձկներն այնուհանդերձ անալի են...

XXXI

Շենքերն ահա նորից հարբուխով են հիվանդ.
-Սկըսվում է արդեն ձնհալն էլի:
Ցուրտ է, սակայն արդեն պաշտոնակա՛ն մի ցուրտ,
Եվ ուր որ է պիտի գործն ավարտի - գնա:
Եվ ուր որ է կգա ինքը գարունն արդեն,
Ու պատանու նման հողը կապրի արբունք.
Կանաչ բեղեր կաճեն նրա շրթունքներին,
Եվ կմազակալի անմազ դեմքը նրա:
Կվարարեն շուտով վտակ - գետակ - գետեր:
Չվարարե՞ն, բա ո՞նց...
Թե ամեն ինչ լռի՝
Մինչև անգամ հեռվից
դու կարող ես լսել
Արյան գոչգոչումը և իմ երակներո՛ւմ.
Ընդերկրյա՛ գետեր՝
Վարարել են, բա ո՞նց...
Կվարարեն շուտով վտակ - գետակ - գետեր,
Եվ ջրերը ելման կստանան գույն յոդի:

Ո՛չ, ջրերը ելման յո՞դ կդառնան իրենք,
Որ վերքերը բուժեն խեղճ ափերի,
Իրե՛նց իսկ հասցրրած վերքերը խոր,
Որոնք, միևնո՞ւյնն է, չե՛ն բուժվելու,
Ինչպես վերքերն իմ այն,
Որ դու տվիր...

XXXII

Իսկ դու գիտե՞ս արդյոք,
Թե մարդկային լեզվի
Ո՛ր բառով է կոչվում այս վիճակը՝ իմը,
Որին ո՞չ մի մակդիր չի սոսընձվում բնավ:
Իսկ ես գիտե՛մ արդեն.
-Ճգնաժա՞մ է կոչվում:
Ճգնաժամն էլ այն է, որ անցնում է վաղ - ուշ,
Թե չէ պիտի որ նա ուրի՛շ բառով կոչվեր:
Եվ սա ճիշտ է նույնքան,
Եվ անխուսափ նույնքան,
Որքան որ մազերի ճերմակումը:
Իսկ իմ մազերն իրոք սկսել են փոխվել:
Ե՛վրս մի քիչ ճերմակ՝
Ու կազատվեմ քեզնից.
Էլ չե՞մ քայլի այնպես,
Ասես մարդ չեմ ապրող,
Այլ կախարան քայլող, որից կախ են տվել
Մի վերարկու մաշված և մի ծանոթ գլխարկ...
Էլ չե՞մ շնչի արդեն խոխոալով այնպես,

Ինչպես բութ սղոցը՝ թաց գերանում...
Մաքսանենգի նման ինձ վտանգի մատնած,
Չունենալով նրա ճարպըկությունը գեթ,
Էլ ես՝ կոխկրտելով՝ չեմ անցնի և դառնա
Հպարտության հսկած այն սահմանից,
Որի հին անունը ինքնասիրություն է...
Տառապանքի տապից աչքերս էլ չե՞ն քրտնի,
Եվ չի՛ կաղա ժպիտն իմ շուրթերի վրա՝
Դեմքըս վերածելով ծուռ հայելու...
Էլ չե՞մ գերադասի ես խավարը լույսից,
Ինչպես անում է դա նախապապը մեր այն,
Որին պատվում ենք մենք «անձրևաորդ» բառով...
Եվ ինձ չսիրելուդ, ինձնից հեռանալուդ
Հանկարծահաս գյուտին ես կնայեմ այնժամ,
Ինչպես որ նայում ենք արդ վառոդի գյուտին.
-Ահավոր էր՝ երեկ,
Սովորական՝ այսօր...
...Ով որ ուսանել է սիրո դպրոցներում՝
Դաս է առնում նաև պըրոֆեսոր սարդից:
Ուստի ես էլ գիտեմ, որ երբ - սարդի նման -
Մի մահաբաղձ պահի կախ են տալիս իրենց՝
Իրենց ավշե հյութից իրենց հյուսած թոկով,
Ապա... չե՞ն խեղդվում, չէ՛:
-Անվնա՞ս են մնում...

XXXIII

Հեռանալուց առաջ ձմեռն ահավասիկ

Թաց կոկորդն է մաքրում մի անհարմար հազով՝
Իբրև ճարահատյալ իր մեկնումի նշան:
Մեկնելու եմ ե՛ս էլ...
Ու ես ճիչս եմ խզում իմ կիսաբաց բերնում՝
Կիպ շարժումով ձեռքիս,
Հպա՜րտ ձեռքիս:
Մեկնելու եմ ե՛ս էլ...
Թե լինեին մտքեր ձայնագրող նիշեր՝
Կդառնայի գուցե նո՛ր Բեթհովեն.
Ե՛վ խլացած արդեն՝
Բիրտ աղմուկից ցավի,
Բայց և լեցուն սիրո նվագներո՜վ:
Մեկնելու եմ ե՛ս էլ...
Վաղը կայարանում ես շունչ կառնեմ ազատ՝
Գործող հրաբուխի ինձ հարազատ վայրում.
-Շոգեքարշերն իրենց խառնարանից նեղլիկ
Ծուխ կփնչան երկինք՝
Հուր ժայթքելու պատրաստ:
Իսկ իմ ծուխը երբեք դու չե՜ս տեսնի...
Ու կմեկնեմ հեռու,
Ու կմեկնեմ անդարձ,
Ու կնստեմ մարդկանց սրտերին մոտ,
Որ տաքանամ մի քիչ նրանց բարությունից,
Եվ տաքանան մի քիչ նրանք իմ բարկ սիրուց...

XXXIV

Նորահաստա՜տ մի սեր և նորաքա՜նդ մի սեր,-

Սա մի պատմություն է, որ չի հնանալու,
Ինչպես երբևիցե չեն հնանա
Մահն ու ծնունդը նոր,
Լացը երեխայի
Ու ծերացած աչքի արցունքոտվելն անլաց.
Ինչպես երբևիցե չեն հնանա
Բախի զրույցները արարչի հետ,
Կասկածն Օթելլոյի՝
Իմ հորեղբոր որդու,
Եվ իմ Սոկրատ պապի վարքը ծանոթ...
Դերը չսիրվածի կամ մերժվածի
Ես՝ կարող եմ խաղալ նո՛ւյն հեշտությամբ,
Ինչ հեշտությամբ կյանքում պիտի դառնա
Համ չզգացող մարդը՝ լավ գինեգործ,
Գույն չջոկող մարդը՝ լավ ծաղկագետ:
Մերժված ես չե՞մ եղել
Ու չե՞մ լինի - երբե՛ք:
Եվ ինձ չսիրելը - անհնար է նույնքա՛ն...
Ես լոկ նահանջում եմ,
Որ սկըսվեմ նորի՞ց...

XXXV

Երբ հաղթում է խոսքը՝ մեղեդին է մեռնում:
Ես կլռեմ հիմա, որ մեղեդին հնչի.
-Կնահանջեմ,
Սակայն կնահանջեմ... երգո՞վ:
-Ե՛ս եմ ստեղծել քեզ

Եվ ստեղծել՝ սիրո՞վ:
Եվ դու պիտի ապրես սիրո՛վ միայն,-
Լոկ այս երգն է թառած իմ նահանջող բերնին...
-Մի ընդ-օրի-նա-կի՞ր,
Օ-ր-ի-ն-ա՞կ տուր սիրո,-
Ես այսպես եմ երգում նահանջելիս...
-Օրինյալ եղիր այնպես, ինչպես կայիր՝
Թեկուզ ինձնից հեռո՞ւ,
Ո՛չ ինձ համար...
-Հավետ օրինյալ լինի քո անունը,
Որ հնչում է մերթ «Կին» ու մերթ էլ «Սեր»...
-Հավետ օրինյալ լինի քո ժպիտը՝
Հայտարարը սիրո և խնդության...
-Հավետ օհնյալ լինեն քո կողերը,
Որոնք կյանք են ծնում տաք հպվելուց,
Ինչպես որ շփվելուց ծնվում է հուր...
-Հավետ օրինյալ լինի նաև հեռացումդդ,
Որ իբրև նոր գալուստ կարձագանքի հեռվում...
-Օրինյալ լինի նաև տված տառապանքդդ,
Որից ոչ թե մեռնում, այլ ծնվում են կրկին...
-Օրինյալ լինի նաև իմ մեկնումը,
Իմ այս նահանջումը,
Որ նահանջ է... երգով:
II.1961թ.
Մոսկվա